ԼԴ. ԿՐԿԻՆ ՀԱՆԴԻՊՈՒՄ

Մեծ եղաւ իմ ուրախութիւնը, երբ սալմաստեցի ուխտաւորների թւում գտայ իմ մօրը եւ քոյրերիս: Նրանք եկել էին իմ քեռի Պետրոսի հետ, որը իր ընտանիքով նոյնպէս ուխտ էր եկած: Մօրս վրանը կազմուած էր քեռուս վրանին կից: Իմ հայրենակիցներից մէկը ինձ այնտեղ տարաւ:

Մինչեւ այնօր երբեք չէր պատահել ինձ այնպէս ջերմ կերպով զգալ մայրական սէրը եւ քրոջ սրտի գորովական քնքշութիւնը, որպէս այն որոպէում, երբ ես գտայ իմ մօրը եւ քոյրերիս: Սկզբում նրանք մնացին բոլորովին ապշած, խօսք չէին գտնում խօսելու, եւ իրանց կարօտութիւնը յայտնում էին համբոյրներով, գրկախառնութեամբ եւ արտասուքով: Ես էլ չկարողացայ պահել իմ սրտի զեղմունքը, եւ իմ աչքերում յայտնուեցաւ արտասուք:

— Փա՛ռք քեզ, աստուած, չմեռայ եւ կրկին տեսայ որդուս... քեզ մատաղ, բալաս... Ինչպէ՛ս դու թողեցիր մեզ, իմ աչքի լոյս... ես ո՞վ ունեմ բացի քեզանից, Ֆարիատ ջան, դու որ չլինես, ինձ թող տանեն ողջ-ողջ գերեզմանը դնեն... Ի՞նչ էի արել քեզ, Ֆարիատ ջան, ինչո՞ւ հեռացար մեզանից...

Այսպէս մրմնջում էր մայրս, մերթ ուրախանալով եւ մերթ լալով, իսկ քոյրերս, Մարիամը եւ Մագթաղը չէին ուզում ինձ բաց թողնել իրանց գրկից:

Մայրս եկած էր ուխտ, որպէս յիշեցի, իմ քեռի Պետրոսի ընտանիքի հետ: Այդ մարդն իմ հոգեւոր հայրն էր, միեւնոյն ժամանակ մեր թաղի տանուտէրը: Քեռի Պետրոսը Սալմաստի մէջ համարւում էր շատ փորձուած, խոհեմ եւ խելացի մարդ. նա նշանաւոր էր իր երկար ճանապարհորդութիւններով զանազան երկրներում:

— Ու՞մ հետ ես եկել, Ֆարիատ, — – հարցրուց մայրս: — Դու ի՞նչ գիտէիր, որ մենք այստեղ ենք:

Ես պատասխանեցի, թէ եկած եմ որսորդ Աւօյի ընտանիքի հետ, յայտնեցի՝ թէ ովքեր են նրանցից եկածները: Մարիամը եւ Մագթաղը շատ ուրախացան, երբ լսեցին, թէ Մարօն էլ ուխտաւորների թւումն է:

— Ֆարիատ ջան, տար մեզ տեսնենք Մարօին, — ասաց Մարիամը:

— Դու խօ կը թողնե՞ս, մայրիկ, գնանք Մարօին տեսնենք, — աւելցրուց Մագթաղը:

Ես առաջարկեցի եւ մօրս գալ ծերունի որսորդի ընտանիքի վրանը եւ նրանց հետ միասին լինել մինչեւ տօնախմբութեան վերջը: Մայրս պատասխանեց, թէ անյարմար կը լինէր քեռի Պետրոսի ընտանիքից բաժանուել, գուցէ կը վիրաւորուէին նրանք: Բայց երեխեքը, որ ցանկանում էին Մարօին